

ցոյց է անում իւր նպատակը, որի համար լետոյ սկսում է նա սուեղծել իւր գրական փիլիսոփայութիւնը և աւելի ուշ՝ գրական քաղաքականութիւնը: Այդ նպատակն է՝ հասարակութեան կենացքի վերակազմութիւնը: Բոլոր իւր մտքերը Կօնտը հանդամանօրէն և մանրամասն արծարծում է տպագայում իւր «Թրական փիլիսոփայութեան գասընթաց» և գրական քաղաքականութեան համակարգութիւն» վերնագիր ունեցող աշխատութիւնների մէջ:

ԱՊՐՈՒԾԻ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՍՂՈՒԹԻՒՆԸ

Ուսումնատենչ երիտասարդը համարեա ոչ մի ուշագրութիւն չէր գարձնում իւր նիւթական դրութեան վերայ: Տարիները անցնում էին իրար ետևից, իսկ նա մի կերպ կառավարում էր մասնաւոր գասերով, իւր բոլոր ոլժը գործադրելով գիտնական զբաղմունքների վերայ: Ահա թէ ինչ է դրում նա իւր մի բարեկամին:

«Ես մտագիր եմ վերջապէս ալդ արձակուրդի ժամանակի իմ նիւթական դրութեան մասին հօգալ: Այդ տեսակի բոլոր աշխատութիւնները ինձ համար սասարկ տիսուր են, բայց ես ալժմ համոզաւել եմ, որ չափազանց քիչ նշանակութիւն եմ տուել մինչև օրս իմ կենացքի նիւթական կողմին: Ես համոզուեցի, որ վերջապէս հասել է ժամանակը, երբ ես փոքրինչ լուրջ պիտի մտածեմ ալդ մասին»:

Մի ուրիշ նամակում գրում է.

«Իմ մտքի համար ոչինչ աւելի մահառիթ չէ, որքան.... իւրաքանչիւր օր մտածել, թէ ինչ պէտք է ուտել վաղը.... Այդ մտածելուց ես սաստիկ մտատանջւում եմ, մինչև իսկ լուսահատում՝ եթէ ալդպիսի դրութիւնը սովորական կը գառնալ, հարկաւոր կը լինի հրաժարուել իմ բոլոր պարապմունքներից, բոլոր փիլիսոփական ծրագիրներից ու դառնալ իմարի մէկը»....

Բազմարուեստեան գալրոցում կամ համալսարանում պաշ-

տօն ստանալ նա չէր կարող, որովհետև նրան արգելուած էր առհասարակ մտնկավարժական գործունէութիւնը:

Չնալելով իւր նեղ դրութեան, Կօնտը ամուսնացաւ մէկ չքաւոր աղջկայ հետ։ Նորապսակները փաքրիկ ճանապարհորդութիւն կատարեցին գաւառում, ապա վերադարձան և փորձեցին թոշակատու աշակերտներ պահել, բայց չը լաջողեց։ Նրան նորհուրդ տուին ժողովրդական դասախոսութիւններով զբազուել։ Նա ծրագիր հրատարակեց բաղկացած 72 դասութից։ Առաջին ու երկրորդ դասերը պիտի նուիրուէին դասընթացի նպատակը և ծրագիրը որոշելուն, հետևեալ 16 ը մատիմատիկային, 30-ը ֆիզիկական գիտութիւններին և 20-ը բնախօսութեան ու հասարակաց գիտութեան։ Դասախոսութիւններին լաճախեցին շատ քչերը, բայց ընտիր մարդիկ (Հումբօլդտ, Բլէնվիլ և այլն)։ Խնչ օգուտ, երեք դասախոսութիւնից աւելի չը շարունակուեց։ Հասարակութիւնը, իհարկէ, չէր համակրում և չէր պաշտպանում նոր սկզբունքներ քարոզողին։ Նոյն կերպ վարուեցան նոյն իսկ Սէն-Սիմօնիստները, ժողովրդի առաջադէմ ներկայացուցիչները, որոնցից Կօնտը հեռանալով, ինքնուրոյն ուղղութիւն էր ստեղծում։

Կօնտի հոգեկան լուզմունքները գագաթնակէտին հասն, երբ նրա ընտանեկան կեանքի մէջ խուզութիւններ, շորունակ անհամաձայնութիւններ սկսուեցին կնոջ հետ... ինչպէս երեսում է, գեղեցիկ սեսի անլուրջ ներկայացուցիչը չէր կարողանում ըմբռնել փիլիսօփայ ամուսնուն, որ պատմութեան մէջ լաճախ կրկնուող մի երեսիթ է (Սոկրատէս և այլն)։ Երիտասարդ գիտնականի օրգանիզմը չկարողացաւ տանել ոլժերի այնպիսի լարումը, հոգեկան շափազանց լուզմունքները։ Նա հիւանդացաւ հոգեպէս և խելագարութեան նշաններ երևացին... Մի օր լանկարծ անյայտացաւ։ Մի քանի ժամանակից լիտոլ կինը գտաւ նրան՝ սաստիկ գրգռուած գրութեան մէջ։ Փոքր ինչ հանգստանալով ամուսինը առաջարկեց կնոջ գնալ զրօննելու, բերեց նրան լճի մօտ, թռաւ ջրի մէջ և փորձեց կնոջն էլ իւր հետ միասին ներս գցել։ Բայց կինը ամուր բռնեց ծառի արմատներից և երկուան էլ-

ազտառուեցան։ Մեծ գժուարութեամբ տարան հիւանդ Կօնտին մօտակալ հիւրանոցը։

Սակայն Կօնտը առողջացաւ։ 1819 թրւի սկզբում նա վերսկսեց դասախոսութիւնները։ 1830 թուին սկսեց հրատարակել իւր մեծագոյն աշխատութիւնը։ Բայց այդ հսկայական գործը նրան ոչինչ օգուտ չէր բերում։ 1832 թուին նա տեղ ստացաւ բազմարուեստեան դպրոցում 2000 ֆրանկ ռոմկով, իսկ հինգ տարուց յետոյ նոյն հիմնարկութեան մէջ ստացաւ դասաքննիչի պաշտօնը 3000 ֆրանկ ռոմկով։ Այժմ դասեր ունէր նաև մասնաւոր դպրոցներում։ Եռատեսակ զբաղմունքը վեց տարուալ ընթացքում գոնեալ 20 օր շարունակ հանգստութիւն չէին տուելի Բայց մի քանի տարուց յետոյ նա զրկուեց իւր գլխաւոր պաշտօնից (դասաքննիչի) և կրկին ընկաւ անապահով դրութեան մէջ։

Երկար ժամանակ և լամառութեամբ կռուեց Կօնտը նեղ ապրուստի գէմ։ Միայն իւր կեանքի վերջին տարիններում նա միսիթարւում էր այն մտքով՝ որ ապրուստի միջոց է ստանում, հետեւելով իւր իսկուկան կոչման։ Այդ միջոցները սահմանափակ էին, բայց նրան բաւականացնում էին։ Կօնտը միշտ ապրել էր համեստ կերպով, բայց վերջին տասն տարինները նա էլ աւելի սահմանափակեց իւր պահանջները։ Նա չէր ծխում, սուրճ չէր խում և կերտակուրի մէջ էլ մեծ ջափառութիւն էր պահպանում։ Միակ զուարճութիւնը, որ նա իրան թուլ էր տալիս, իտալական օպերան էր. բայց սրանից էլ վերջիվերջոյ հրաժարուեց։

Գոյութեան կռիւր Կօնտի կեանքի տիսուր կողմերից մէկն էր։ Բայց այժմ կը ծանօթանանք մի ուրիշ տիսրալի գծի հետ։

ԱՄՅՈՒԾՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻԾԿԱԿԱՆ ՍԵՐ

Կօնտը բախտաւոր չէր նորնպէս սիրոյ խնդրի մէջ։ Նա ամուսնացել էր մի աղջկայ հետ, որին չէր սիրում, և որը նրան բախտաւորացնել չէր կարող։ Կարօլինան—Կօնտի